№ 137 ՇԱԲԱԹ, 26 ՅՈՒՆԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ՅՈՒՆԻՍԻ № 137

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱԲԾԱՐԻՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
6 ՌՈՒԲԼԻ

12 ամիս՝ 10 ռ., 6 և 7 ամիս. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել հաւ. հինգ հասգեն, նոյնպէս և 40 կօպ. (ֆարեալի է և նամակագրոշմով).

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ Л. и Э. Метцль и К°, Ֆեոդոսիայում և Վարշավայում։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

„Մշակի“ խմբագրութիւնը յիշեցնում է այն բաժանորդներին, որոնք վճարել են 5-ական ռուբլի, շտապել ուղարկել մնացորդ 5 ռուբլին, որպէսզի յուլիսի 1-ից չրագրի առաքման գործում ընդհատում տեղի չունենայ։

Վաղը, կիրակի, յունիսի 27-ին
ՇՈՒՇՈՒՄ տեղի կունենայ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
նոր երգ վախճանված
Աւետիս Բաբայեան ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ
յիշատակին։ 778. 1—1

Զաքար և Էփեմիա, Արմենակ, Լուսիկ և Լևոն Գէորգեանները, Հռիփսիմէ և Ցակոբ Շահնազարեանները, Եղիսաբէթ Գուլասարեան և Մարիամ Նիկողոսեան խորին վշտով յայտնում են առաջիններն իրանց թանգագին դստեր, երկրորդները՝ սիրելի քրոջ, երրորդը՝ անմոռանալի թոռան, իսկ վերջիններն իրանց քրոջ աղջիկ, 1 գիմնազիայի VI դասարանի նախկին աշակերտուհու՝
ԱՍՏՂԻԿ ԳԷՈՐԳԵԱՆԻ
մահը, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ Ցեմի ամբոնցում։ Ամփիթեան այսօր, երեկ. ժամը 7½-ին, Զգրաշէնի եկեղեցու գաւթում. յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, ամսոյս 27-ին, առ. ժամը 10-ին. թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։
773. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒՐԲԱԼՕՎԻ ԱՆՎԱՆ
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑԱ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻՍ
Շաբաթ, յունիսի 26-ին,
Հայոց դրամ. ընկ. թատերասէրների խումբը վերջին անգամ, մասնակցութեամբ եւ բեմադրութեամբ Սեւումեանի
կը ներկայացնէ—Գուցկովի
ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ
Ողբերգ. 5 գործ., թարգմ. Աւալեանի
Մասնակցում են.—Էկ. Զաբէլ. օր. Սօլովեան, պ. պ. Ահարոնեան, Անանեան, Գալստեան, Գաւրօշ, Լազարեան, Հայկազեան, Մոսէսեան, Տարախչեան, Տէր-Առաքելեան, Տէր-Յովհաննիսեան, Սեւումեան և ուրիշներ։ Սկիզբն է ճիշդ 8 և կէս ժամին երեկոյեան։ Տեղերի գները 5 կօպէկից մինչև 50 կօպէկ։
Հերթ. կարգադրիչներ՝
Սարեան և Սամբօլցեան
772. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԲՕՒ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր փաթեթը (ռուլօ)։
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում։
ԲԱԺԱՆՄՈՒՆԸՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Գօլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
ՏԷԼԷՖՕՆ № 355.
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ԶՐԻ
(հ.2.) (ա.) 310. 50—28

ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋԸ

II

Դուք տեսնում էք, թէ ինչ տեսակ դերեր են յատկացվում գաւառական ուսուցչին։ Իսկ միևնոյն ժամանակ ի՞նչ է արված բարոքելու և բարձրացնելու գաւառական այդ գործողի վիճակը։

Դուք ցանկանում էք, որ ուսուցիչը բացի դպրոցական իր պարտաւորութիւնները կատարելուց՝ հանդիսանայ դաւառում և իբրև ինտելիգենտ գործող որոշ հեղինակութեամբ և ազդեցութեան ոյժով։ Բայց հաշվում էք և այն անխախտելի պայմանների հետ, որոնք բաժին են ընկել հայ ուսուցչին։

Արդարև՝ շատ և շատ դէպքերում ուսուցիչը խղճագոյն հանգամանքների մէջ է լինում՝ իրաւազուրկ իր պաշտօնավարութեան մէջ, կարիքներով լի իր ապրուստի վերաբերութեամբ, անպաշտպան իր մաքառումների մէջ, զրպարտված և չարախօսված՝ իր դիտաւորութիւնների վերաբերմամբ։

Ամօթ է արձանագրել, որ գաւառական ուսուցիչը յաճախ անկարող է լինում կանոնաւոր կերպով ստանալ իր սահմանափակ ռոճիկը և ստիպված է լինում ապաւել շաբաթներ և ամիսներ իր հասոյթներին, կամ մուրալ նրանց մաս-մաս, ինչպէս մի ողորմութիւն։

Ծանր է յիշատակել, թէ ինչպէս փոխանակ աջակցելու ուսուցչին՝ աշխատում են բռնանալ նրա վրա տեղական ազդեցիկները և նրան ծառայեցնել իրանց կողմնակի հաշիւներին ու նպատակներին և երբ հանդիպում են դիմադրութեան՝անկարող լինելով դարձնել նրան գործիք իրանց նկատումների աջողութեան համար, այն ժամանակ լարում են որոգայթներ նրա դէմ և աշխատում դուրս շպրտել դպրոցից ու գիւղից։

Մի՞թէ նիւթական և բարոյական այդպիսի անպաստ հանգամանքներում իրաւունք ունէք դուք մեծ պահանջներ անել գաւառական ուսուցչից։

Ի՞նչ էք տուել դուք, որ գաւառի խորթ ու օտար սովորութիւնների և հակացողութիւնների շրջանը ընկած ինտելիգենտ մարդը կարող լինի բաւական անկախ լինել, որոշ դիրք գրաւել և հեղինակաւոր ձեռնհասութեամբ գործել։

Մեր կեանքի պայմանները դարձրել են ուսուցչին մի պատահական այցելու, մի հիւր, որ հանգամանքների բերմունքով այսօր ընկել է գաւառի մի անկիւն, վաղը մի ուրիշ անկիւն և չը գիտէ, թէ ինչ է սպասում նրան առաջիկայում։

Լինելով անապահով իր նիւթական կացութեան մէջ և անպաշտպան իր պաշտօնավարական գործունէութեան մէջ, նա չունի միխթարութիւններ նաև իբրև մանկավարժ և ինտելիգենտ գործող։ Ոչ դպրոցական ծրագիրները, ոչ դասագրքերը, ոչ մանկավարժական կարգադրութիւնները չեն վերածվում որևէ սիստեմի և գիտակցօրէն սահմանված ուրուագծի։

Ամեն ինչ անորոշ, ամեն ինչ ենթակայ քմահաճոյքի թելադրութիւններին։

Եւ հասկանալի է, անշուշտ, որ այն էլ, ինչ գործվել է և գործվում է ուշադրութեան և գովասանքի արժանի, նոյնպէս պատահական բնաւորութիւն է կրում և անկարող է խոր արմատներ ձգել իրականութեան մէջ։

Ժամանակն է հերթական լուրջ քննութեան առարկայ դարձնել հայ ուսուցչի վիճակի բարւոքման խնդիրը և գպրոցական գործողին դնել նիւթական և բարոյական բարենպաստ պայմանների մէջ։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցարսկօէ-Սէլօ, 24 յունիսի

Քաղաքը տօնում է իր հիմնադրութեան 200-ամեակը։ Տները զարդարված են դրօշակներով. շատ փողոցներում շինել են կանաչից գիրլեանդներ, կայմեր՝ ոսկէ արծիւներով և Նոցին Մեծութիւնների ինիցիալներով։ Տեղական տները զարդարված են ազգային ծաղիկների կոորներով, արօպիքական բոյսերով, Նոցին Մեծութիւնների բիւստերով։

Եկատերինեան՝ հոծ բազմութեամբ լի՝ տաճարում գտնվում էին կայսերական շքախումբը, պալատի պաշտօնեաները, պաշտօնական անձինք, պատգամաւորութիւններ, քաղաքում և շրջակայքում գտնվող գնդերի օֆիցէրները։ Կատարվեց հանդիսաւոր մաղթանք, որի ժամանակ եկան Մեծ Իշխանուհիներ Մարիա Պաւլովնան, Վիկտորիա Ֆէոդորովնան և Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչը։

Պատարագից յետոյ հանդէսը դիմեց դէպի Մեծ պալատը։ Այստեղ դիմեցին միւս եկեղեցական թափորները։

Մեծ պալատի հրապարակի վրա, որ լի էր հաւարակութեամբ, կատարվեց զօրախաղ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայէվիչի հրամանատարութեամբ։

Մեծ պալատում այնուհետև արվեց նախաճաշ, որին ներկայ եղան զօրախաղին մասնակցող բոլոր պաշտօնեաները։ Մեծ Իշխանը բաժակ առաջարկեց կայսրի համար, որ ընդունվեց բուռն ոգևորութեամբ և աղմկալի «ուռաներով»։

Կայծակը և անձրևը մի փոքր խանգարեցին ժամը 5-ից սկսված ժողովրդական զբօսանքի աջողութեան։
(Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 24 յունիսի

Ցարսկօէ-Սէլօյի 200-ամեակի հանդիսի առիթով այնտեղ ուղևորվեց յատուկ պատգամաւորութիւն քաղաքագլխի ու վարչութեան անդամների մասնակցութեամբ՝ Պետերբուրգի անունից ներկայացնելու Ցարսկօէ-Սէլօյի քաղաքային վարչութեանը ուղերձ և Եկատերինա II-ի արձանի կողապարը։

Յունիսի 14-ի ամենահպատակ զեկուցման համաձայն Կայսրը հրաժարեց սենատոր Դարբինին յանձնարարել ի միջի այլոց նաև սիբիրեան կազակների զօրաց մնտեսական վարչութեան ու դրամագլխների գործերի վերաստուգութիւնը, որի համար տալ նրան հարկաւոր լիազօրութիւնները։
(Հ. Գ.)

—

Հէլսինգֆօրս, 24 յունիսի

Մամուլի վերաբերեալ գլխաւոր վարչութիւնը դաստաստանական դեպարտամենտին է ներկայացրել «Բաուամանլէխտէր» թերթի № 72-ը և «Ֆիրէնի» № № 26 ու 27-ը Նորին Մեծութեան հասցէին վիրաւորանքներ թոյլ տալու համար։ (Հ. Գ.)

—

Բերլին, 24 յունիսի

«Կեօլնիշէ-Ցայտունգին» հաղորդում են Հոսմից, որ պետութիւնների կաբինէտները նախապատրաստված են այն բանին, որ Զերնօգօրիան յօբելեանական տօնահանդէսների ժամանակ՝ օգոստոսին՝ իրան կը հրատարակէ թագաւորութիւն։ Նախնական բանակցութիւնները ցոյց տուին, որ այդ քայլը առարկութեան չի հանդիպի պետութիւնների կողմից։ (Հ. Գ.)

Լոնդոն, 24 յունիսի

Դարջիլինգից Ռէյտերի գործակալութեանը հաղորդում են. «Տիբէթում սկսված յուզմունքը Չինաստանի դէմ աճում է։ Լամաների ահագին մի խմբակ պնդում է, որպէսզի Դալայ-լաման հեռանայ Դարջիլինգից և վերադառնայ Տիբէթ»։

Վերջին տեղեկութիւնները Չինաստանից հանգստացուցիչ չեն։ Հիմք կայ կարծելու, որ անկարգութիւնները վերականգնելու դէպքում կղզին կուղարկվեն մեծ պետութիւնների նաւերը կարգ ու կանոնը պահպանելու և status quo-ն պահելու համար։ (Հ. Գ.)

—

Օդեսսա, 24 յունիսի

Կայանաւորված է մաքսատան պահեստի գանձապահի օգնականը, որ գողացել էր 20,000 ռուբլի։ (Հ. Գ.)

—

Հռօմ, 24 յունիսի

Պատգամաւորների պալատը ընդունեց սկզբնական կրթութեան վերաբերեալ օրինագիծը և ապա ընդհատեց իր նիստերը անորոշ ժամանակով։
(Հ. Գ.)

—

Մադրիդ, 24 յունիսի

Պատգամաւորներն ու սենատօրները՝ կարլիստները՝ պապի ներկայացուցչին բողոք ներկայացրին պապի անունով՝ հակառակ կարծիք յայտնելով Կանալէխասի քաղաքականութեան դէմ։ (Հ.Գ.)

—

Օդեսսա, 24 յունիսի

Նաւահանգստում աշխատանքները դադարեցրին ածխագործները, խնդրելով աւելացնել աշխատավարձը։ Սինդիկատի բանակցութիւնները առայժմ անհեռանք են։ (Հ. Գ.)

—

Նիկոլայեվսկ, 24 յունիսի

Քաղաքը ձեռնարկեց 13 քարաշէն երկյարկանի քաղաքային դպրոցների շինութեան կառուցման 308,000 ռուբլի արժողութեամբ։ (Հ. Գ.)

—

Կազան, 24 յունիսի

Սենատոր Գարբինի վերաստուգութեան աւագ պաշտօնեայ Միլովանովը նոր գործ է սկսել պատասխանատուութեան ենթարկելու ինտենդանտութեան պաշտօնեաներին 800,000 պուդ հաճարի մէջ կատարված գողութիւնների համար։ Զեմստվոն յանձն էր առնում մատակարարել պուդը 5-ական կօպէկով, մինչդեռ ինտենդանտները տուել են կապալը Ուֆիմի ֆիրմաներին 7½ կօպէկով։ Ալիւրը թանգանում էր աւելի փոխադրութեան շնորհիւ։ (Հ. Գ.)

—

Կազան. — Միսիոնեական հաւագումարում Սարատովի եպիսկոպոս Գերմոգենը առաջարկեց՝ եկեղեցուց բանադրել Մէրէժկովսկիին, Լէոնիդ Անդրէեվին և „Нов. Вр.“ լրագրի աշխատակից Բօգանովին, նոյնպէս և առհասարակ ամբողջ չը հաւատացող ինտելիգենցիային։ Ժողովականները բացասաբար վերաբերվեցին այդ առաջարկին։

Համագումարը ընդունել է մի բանաձև, որով թոյլատրվում է կանանց պարապելու միսիոնեական գործունէութեամբ։ («Կ.»)

—

Այս տարի Մոսկվայի համալսարանում ընդունվելու են 2000 հոգի։ Զորս օրվայ ընթացքում խնդիրք տուողների թիւը հասել է 250 հոգու։

Ներքին գործերի մինիստրութիւնը մամուլի վերաբերեալ մի նոր օրինագիծ է մշակում Պետական Դումային ներկայացնելու՝ աշնան սեկցիայի սկիզբներում։ Օրինագծի հիմնական իմաստը այն է, որ մամուլը պէտք է ազատվի ադմինիստրացիայի քմահաճոյքներից և ստորադրվի դատաստանական հաստատութիւնների իրաւասութեան։

—

Վլադիվոստոկ.—Եապօնիայից ստացվող տեղեկութիւնների համաձայն, այնտեղ շտապ ռազմական պատրաստութիւններ են տեսնվում։ Ամբողջ երկիրը պատերազմական բանակի է վերածված։ Կազմակերպվում են 19 զօրաբանակներ։ Օրէ-ցօր սպասվում է, որ պաշտօնապէս կառավարութիւնը կը յայտարարէ Կորէայի անեկսիայի մասին։ («Կ.»)

ՍԼԱՒՕՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Սոֆիա, 24 յունիսի

Սլաւօնական հաւագումարի պատգամաւորներին պակներ են յանձնում ժողովրդի կողմից։ Կրամարժը, Գուչկովը և Բօբչէվը պատասխանում են ողջոյններին։ Նիստը վերսկսվում է։ Գանչէվը Սոֆիայի ընկերութիւնների անունից ներկայացնում է Կրամարժին մի պակ սլաւօնական գաղափարին ծառայելու համար։ Այնուհետև արտասանում են ճառեր իրար ետևից ռուսական գանգան քաղաքների ընկերութիւնների ու հասատութիւնների ներկայացուցիչ հիւրերը։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 24 յունիսի

Ռուս հիւրերը՝ եղբարք Գուչկովները, Միլիւտինը, կոմս Բոբրինսկին, Ստախովիչը և այլք այստեղ հասան և հանդիսաւոր կերպով ողջունվեցին Բօբչէվի ու քաղաքագլխի կողմից։ Ժողովուրդը ցնծութեամբ ողջունում էր նրանց ճանապարհին։ Սլաւօնական հիւրերի ու բնիկ անդամների փոխադարձ ծանօթութեան համար քաղաքային տան մէջ փառաւոր երեկոյթ տրվեց, որն անցաւ շատ աջող։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 24 յունիսի

Կիէվի ուսումնարանական շրջանի և Տվերի գիմնազիայի 15 գիմնազիստներ, «Ցաւերթ յիշատակ» երգելով, Աստարար-Թագաւորի արձանի առաջ պակներ դրին. Կիէվի շրջանից՝ արծաթէ և Տվերի գիմնազիայի կողմից՝ թարմ ծաղիկներից պատրաստված։ Բոլգարական գիմնազիաների նուագախումբը նուագեց ռուսական և բոլգարական օրհներգները։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 24 յունիսի

Ոստիկանութիւնը երևան է հանել մի գաղտնի ընկերութիւն, որը նպատակ ունի տապալելու երիտասարդ-թիւրքերի կառավարութիւնը ահաբեկումների միջոցով։ Կատարված են բազմաթիւ կալանաւորութիւններ։
(Հ. Գ.)

—

Լոնդոն, 23 յունիսի

Լաւատեղեակ շրջաններում ոչինչ յայտնի չէ այն մասին, թէ Թիւրքիան քայլեր է արել մեծ պետութիւնների առաջ կրետական հարցի վերջնական լուծում ստանալու համար։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Բաշտ, 24 յունիսի

Տեղական ոստիկանապետը ծանր վէրք հասցրեց մի ռուսահպատակ մեքենավարի ձեռքին և մի քանի թիւրքահպատակների։ Եկաւ ռուսաց հիւպատոսը և վերականգնեց անմիջապէս կարգ ու կանոնը։ (Հ. Գ.)

—

Էնզէլի, 24 յունիսի

Շուկայի կառավարիչը ոստիկանութեան հետ միասին ներս խուժեց մի ռուսահպատակի տունը և ծեծեց Ղազվինի ռուսաց հիւպատոսարանի դուլամին։ Դեսպանը պահանջեց խստագոյնս պատժել յանցաւորներին և վարձատրել վիրաւորված ռուսին և ծեծված դուլամին։ (Հ. Գ.)

—

Թեհրան.—Ասադուլլա-Միրզան մատնանիշ արեց մէջլիսի աշխատանքների ապարդիւնութիւնը, որն իր ամբողջ գոյութեան միջոցին դրական ոչինչ չարեց։ Այդ հանգամանքը ի նկատի առնելով, նա առաջարկեց հրաւիրել օտարերկրացիներ՝ յատկապէս պարլամենտի աշխատանքները ղեկավարելու համար։

Պրէզիդիումը համաձայնվեց այդ առաջարկին և պարլամենտական աշխատանքների ղեկավարութեան համար որոշեց հրաւիրել բելգիացիներ ու ֆրանսիացիներ։
(«Կ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նոր-Բայազէտ, 21 յունիսի

Այս տարի անձրևները շատ քիչ են տեղում մեզանում։ Թէպէտ պարբերաբար ե-

դել են անձրևներ, բայց շատ սակաւ, այնպէս որ հողը դեռ ևս կարգին չէ կշտացել անձրևներից, ուստի բուսականութիւնը պապակած մնում է և չորանալու ենթակայ։ Այժմ, երբ դեռ մեր բուսականութիւնը մատղաշ դրութեան մէջ է և անձրևի ամենակարիքաւոր ժամանակը, դժբաղդաբար՝ երկինքը քարացել է և բաւական անձրև չէ տալիս։ Ժողովուրդը այդ պատճառով սաստիկ յուսահատութեան մէջ է, քանի որ նա գիտէ, որ յունիսի անձրևներն են նրա ցանքերը աճեցնողը, նրան առատութիւն պարգևողը։ Անցաւ յունիս ամիսը առանց անձրևի, և ահա նրա բոլոր ցանքերը չորանալու են և յոյսերը խորտակվելու...

Եւ իրաւ, ցանքերը իրանց կարճ և վըտիտ դրութեամբ չորանալու վրա են. երաշտութեան դէմ անզօր լինելով կու

◆ Ոստիկանապետի կարգադրությամբ այսուհետև բոլոր բաղանիքները պէտք է անպատճառ ունենան գանգատային գրքեր, որի մասին քաղաքային դումայի վաղուց արդէն որոշում է կայացրել, որպէսզի դժգոհ յաճախորդները հարկաւոր դէպքում գրեն իրանց գանգատները։ Այդ գրքերը պէտք է ներկայացվեն ոստիկանատուն ստուգութեան համար ոչ պակաս քան ամսական երկու անգամ։ Գրքերը ձեռք բերելու համար տրվում է բաղանիքատէրերին երեք օր ժամանակավիճակ։

◆ Կառուցվող քաղաքային լողարանի կանանց բաժանմունքը պատրաստ կը լինի և կը սկսի գործել առաջիկայ շաբաթվանից, իսկ տղամարդկանց բաժանմունքը կը բացվի առաջիկայ ամսին։

◆ Միքայէլեան փողոցը, սկսած Նեմէցկայա փողոցից մինչև Կիրօչնայա փողոցը, ասֆալտով ծածկելու կապակով տալու աճուրդը քաղաքային վարչութեան կողմից նշանակված է յուլիսի 5-ին։

◆ Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան բաժանմունքը ուղարկել է իր իսկական անդամ Կ. Սատունինին՝ 300 աշխարհագրական ուսումնասիրութիւններ կատարելու Կովկասի սահմաններում։

◆ Այս օրերս Աբասթումանում կը սկսվեն թոքախտաւորների համար սանատորիա կառուցանելու աշխատանքները։

◆ Հայուհեաց Որբանոց Ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է տիկին Մարիամ Աւետիսեան Կաֆեանից 25 ռուբ. յօգուտ որբերի, իր հանգուցեալ հօր՝ Աւետիս Բահաթրեանի դագաղի վրա պակ դնելու փոխարէն։

◆ Թիֆլիսի քաղաքագլուխը յունիսի 24-ին ներկայացրել է Նահանգապետին ի հաստատութիւն քաղաքային էլեքտրական կայարանի կառուցման համար դումայի կողմից ընտրված գործադիր ժանաժողովի անդամներին։

◆ Յունիսի 1-ից մինչև այժմ Թիֆլիս քաղաքի օգտին սահմանված գնահատական տուրքի ապառիկներից հաւաքված է 12,812 ռ. 19 կ., հաւաքելու ապառիկներ մնում է դարձեալ 15,669 ռ. 79 կոպէկ։

◆ Թիֆլիսի քաղաքային ամրգավաճառներ Շագինովին և Սալատբեգեանին դատաստանական պատասխանատուութեան ենթարկելու գործը, որի մասին վարչութիւնը որոշում էր կայացրել արդէն, դումայի որոշմամբ յանձնվում է դումայի իրաւաբանական ժանաժողովի քննութեան։

◆ Թիֆլիսից հեռագրում են «Новое Вр.»-ին, որ կովկասեան դատաստանական հաստատութիւնների մէջ սկսված գործերի վերաստուգութիւնը վերջանալու վրա է արդէն և խոշոր զանցառութիւններ չեն նկատված։

◆ Յունիսի 24-ի երեկոյեան տեղի ունեցաւ ժողովրդական հատասարանի վարչութեան արտակարգ ժողովը, դարձեալ իր զանձարկղի դատարկութեան մասին մտածելու։ Առայժմ եկամտի ուրիշ աղբիւր չը գտնելով, ժողովը որոշեց ամառվայ ընթացքում Բօրժոմում կազմակերպել մի զբօսանք, որի սկզբնական աշխատանքների հոգացողութիւնը յանձնարարվեց Երմոլայեվին և բժ. Ֆէօդորովին։ Ժողովի խորհրդածութեան նիւթ դարձաւ նաև ամառվայ ամիսներում ուսուցիչներին վարձատրելու հարցը։ Վարչութիւնը միջոցներ չունենալու պատճառով դժուարանում է ազատ ամիսների համար վարձատրելու, այդ պատճառով էլ երկար վիճելուց յետոյ հարցը մնաց բաց, առանց որոշում ստանալու, մինչև առաջիկայ ժողով։

◆ Պաշտօնական գործերով Ախալցխա ու Ախալքալաք գնացած Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահ Ն. Կունիցինը և դատախազ Ն. Ֆէօդորովը վերադարձել են Թիֆլիս։ Կունիցինը ուղևորվել է Դուշէթ՝ ստուգութեան ենթարկելու տեղական դատաստանական հաշտարար հաստատութիւնների գործերը։

◆ Անցեալ մայիսի սկիզբներին Թիֆլիսում ձերբակալվեցի մի խումբ վրացի ինտելիգենտներ, որոնցից Շալվա Ամիրաջիբին, Գ. Մաճավարիանին և Գ. Բութաթելաձէն երկու օր առաջ բանտից ազատ են արձակված։

◆ Ցայտնի է, որ Կախէթի երկաթուղագծի կառուցման կօնցէսիան տրվեց Թիֆլիսի վրաց ազնուականութեանը, որը ներկայումս ստանում է զանազան անձերից և հաստատութիւններից դիմումներ, որոնք առաջարկում են գծի վրայի աշխատանքները իրանց յանձնել կատարելու համար։ Այս հարցին վերջնական լուծում կը տրվի մօտ ապագայում, երբ և կը սկսվեն նախնական աշխատանքները։

◆ Փօթիից գրում են «Ախալի Գէա» լրագրին, որ տեղական հայ և թիւրք բանուորները, որոնք գնացքների և նաւերի վրա մարգանեց բեռնելով են զբաղված, գործադուլ են յայտարարել և գործատէրերին ներկայացրել են անտեսական բնոյթ կրող մի քանի պահանջներ և գլխաւորապէս աշխատավարձի յաւելում։ Տեղական գործատէրերից երկուսը անմիջապէս բաւարարութիւն են տուել բանուորների պահանջներին, իսկ միւս գործատէրերը հայ և թիւրք բանուորների տեղ սկսել են աշխատեցնել վրացի բանուորներ, որպիսի հանգամանքը աննպաստ է ազդել գործադուլաւորների վրա։ Շնորհիւ այդ հանգամանքի երկու գործատէրերի մօտ աշխատող բանուորները, որոնք գործի էին կպել, նորից գործադուլ են արել և պահանջել են շրջէյխբէխէյների (գործադուլարարների տեղ աշխատողների) արձակումը, այնպէս որ ներկայումս աշխատողներ չը կան։ Այս գործին միջամտել է ոստիկանութիւնը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ «Սխիվի» լրագրի խմբագիր Երմոլայ Տուրբէլիձէն գեներալ-նահանգապետի 1907 թ. յունիսի 4-ի պարտադիր կանոնները խախտելու համար ենթարկվում է 300 ռ. տուգանքի կամ մի ամսով բանտարկութեան։

◆ Յունիսի 24-ին պրիստաւ Դաւիդովը առևտրա-անտանական գործակալների հետ քննեց մի քանի փուտեր և ճաշարաններ և նրանցից մի քանիսի վերաբերութեամբ կայացրեց արձանագրութիւններ սանիտարական անմաքրութեան մասին։

◆ Յունիսի 24-ին Ֆօլիվարքի գերեզմանատան դռնապանը գտաւ մի նորածին մանուկ փաթաթված պարուրի մէջ։ Մանուկը մեռել էր արդէն։

◆ Նոյն օրը էլեքտրաքարշի № 28 վագոնը, որ կատարվում էր Միխայիլ Ֆրոլովը, Պեսկովսկայա փողոցում անցաւ Մըկըրտիչ Ավրիկեանի վրայով և ջարդեց նրան ամբողջ մարմնով։ Վնասվածին տարան հիւանդանոց։

◆ Յունիսի 24-ին ձերբակալվեց աքսորական և ինքնակամ կերպով վերադարձած Իվան Գէլիտաշվիլին։

◆ Յունիսի 24-ին Գօլովինսկի պրոսպէկտում իր սեփական արհեստանոցի առաջ նստել էր վարպետ Սասսուն Բալթարաձէն, 49 տարեկան, որ անապասելի կերպով իրան վատ զգալով ընկաւ մայթի վրա։ Բարձրանալիս նա ջարդեց գլուխը և՝ ուշքի չը գալով՝ հիւանդանոց տանելիս մեռաւ։

◆ Բակտերիոլոգիական քննութիւնը պարզեց, որ հացթուխ Բաղդասար Կասեանցը, որ ապրում էր Պոլիցէյսկայա փողոցում, մեռել է խոլերային վիբրիոնների։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Եկատերինբուրգում դատի են ենթարկված կալանաւորներին խիստ գանակոծութեան ենթարկելու համար ուղղիչ բօտայի նախկին պետ Իւգուբշինը, նրա օգնականները և վերակացուներ։ Քննութեամբ ստացված նիւթերը ապացոյց են ապրում մարդու վրա։ Դուրս է գալիս, որ կալանաւորներին ծեծելիս են եղել բացարձակ կերպով, երբեմն մի քանի անգամ, և ապա փակում ցուրտ կարցերի մէջ, մի հատիկ շապկով, առանց ուտելիքի։ Այդ տանջանքներից մեռել են մի քանի հոգի։

◆ Նիկոլայեվսկի նաւաշինական գործարաններում գործարանական վարչութեան հետ տնտեսական պահանջների վրա ունեցած թիւրիմացութիւնների պատճառով գործադուլ արեցին մեքենայական բաժանմունքի բոլոր բանուորները։

◆ Եալտայից հաղորդում են, որ, Զաֆոլովկա գիւղին մօտիկ, տուն վերադարձող հինգ փոքրիկ աղջիկների վրա յարձակում են գործել երեք երիտասարդներ՝ փորձելով բռնաբարել նրանց։ Ծուսահատ ընդդիմադրութիւնից յետոյ աղջիկներին աջողվել է փախչել ու ազատվել նրանց ձեռքից։

◆ Ռուսաստանի ազգաբնակութիւնը իր պարապմունքներով հետևեալ պատկերն է ներկայացնում։ Դիւղատնտեսութեամբ պարապում են 95.701,564 հոգի, այսինքն 77,57%, արհեստով ու արդիւնաբերութեամբ 11.730,815 կամ 9,34%, մասնաւոր ծառայութեամբ՝ 5.788,977, ճանապարհների հաղորդակցութեան մէջ են գտնվում՝ 1.951,010, առևտրով պարապում են՝ 4.995,337, միացեալներն ունեն ուրիշ պրոֆեսիա և անորոշ զբաղմունքներ։

◆ Պետերբուրգում ոստիկանութիւնը հրեան է հանել յատկապէս կանանց գաղտնի խաղատուն։ Ցանկարծակի կատարված խուզարկութեան միջոցին գտել են և իսկական գաղտնի խորհրդականուհիների, բաղմաթիւ տիրոջուհիներ անձանց և ուրիշների։ Այդ գաղտնի որջի մասին ոստիկանութեանը տեղեկացրել է տէլեֆոնով կանացի ձայնով մի անձնաւորութիւն։ Այդ կինը հաղորդել է ոստիկանութեանը խաղատան հասցէն, ուր, նրա ասելով, ազարտաւոր թղթախաղ է տեղի ունում, և ինքը վերջին օրերի ընթացքում տանուլ է տուել 18,000 ռուբլի։ Այդ յայտարարութեան հիման վրա ոստիկանութիւնը յանկարծակի խուզարկութիւն է կատարում և բռնում է խաղի միջոցին մի քանի կանանց։ Ոստիկանութեան ժամերը նկատելով նրանք փախչում են ու թաքնվում մութ անկիւններում, որտեղից ոստիկանութիւնը դուրս է քաշում նրանց ու տանում ոստիկանատան։

Մ Ա Մ Ո Ւ Լ

Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Այվազեան Օտակ արքեպիսկոպոսը հրատարակել է մի շրջաբերական՝ ուղղված իր թեմի հայերին, որով յորդոր է կարդում չը շլանալ երևակայական բաղդի ցնորքներով և պանդխտութեան գաւազանը չառնել դէպի Հնդկաստան։

«Հնդկաստանը, — ասում է արքեպիսկոպոսը, — Նոր-Զուղայի համար դառել է մի տեսակ ուխտատեղի և նոյն դերն է խաղում Զուղայի համար, ինչ որ երբեմն Պոլիսը՝ Թիւրքահայաստանի»։

*

Զմիւռնիայում տեղի ունեցած ծանօթ դէպքերի մասին խօսելով Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը ցաւ է յայտնում, որ կուսակցութիւնների շնորհիւ հայ ժողովուրդը ստիպված է դիմել եղբայրասպան կռիւի։

Այս եղբայրասպան կռիւին առջև կարելի չէ որ անտարբեր գտնուի ոևէ հայ՝ ազգին այսպէս փճացումին ճամբան տեսնելով։ Ի՞նչ կը լինի կը, եղբայր։ Ո՞վ զոմ պիտի ջախջախէ։ Միթէ տեսնուած բան է որ բռնապետութենէն հազիւ լոյս աշխարհ եկած մեզի նման դժբաղդ և իրապէս ողորմելի ազգի մը արդէն իսկ ընկճուած, փճացած ու բարոյապէս և նիւթապէս մահամերձ վիճակի հասած անդամները բոլորովին ոչինչ պատճառներով զէրար բզքեն։ Ի՞նչ խնդիր ունինք մէջտեղը։ Մուշէն դժբաղդութեան անօրինակ գոյժեր կը հասնին, Հաջընէն, Զէյթունէն, Կիւրինէն, Ակնէն «անօթի ենք» կը պոռան, Կիլիկիան՝ ամբողջութեամբ բողոքականութեան դիմելու վտանգին առջև կը գտնուի և մենք կարծես թէ՝ ամեն բէֆերնոս տեղը՝ բնաւ հոգ, մտմտուք չունինք, փորը կուշտ մարդու հովեր առնել և գաղափարի պայքար մղել սկսած ենք իրարու դէմ։ «Բուրժուազիա» և «պրոլէտարիա»։ Ցուցուցէք անգամ մը, կաղաչեմ, ձվ է բուրժուան և ձվ է պրոլէտարը։ Ակից տասը տարի առաջ իբրև հարուստ և տանէն քսան հազար ոսկիի տէր կարծուած շատ մը հայեր այսօր ամեն բան կորսնցուցած, բառին իսկական առուսովը պրոլէտար, այսինքն ընչազուրկ դարձած են։ Հետևաբար ինչ դասակարգ ունինք որ դասակարգային կռիւ մղենք։ Ամենքս ալ միևնոյն դասակարգին կը պատկանինք։ Եթէ այսօր քանի մը կուշտ փորով մարդիկ կան, անոնք ալ, ուշ կամ կանուխ, պրոլէտարներուն եանէն պիտի հասնին այս ընթացքով։

Մեր մասին մենք խորապէս կը ցաւինք և վիշտ կը զգանք, որ ազգը իր հազարաւոր զէրզերուն մէջ՝ կազմակերպութիւն ստեղծելու հարկին տակ կը գտնուի։

Կը թախանձենք երկու կողմին ալ, որ յանուն ազգութեան և յանուն եղբայրութեան մէկդի դնեն այս անոտի պայքարները և ալ աւելի չէրտանեն արդէն իսկ բորբոքած կիրքերը։

Իսկ գալով բուն խնդրին, կարելի չէ ցաւ ու վիշտ չզգալ ս. պատրիարք հօր երկդիմի, անորոշ և խուսափողական հեռագիրը կարդալով։ Ն. սրբազնութիւնը եթէ կուզէր վերջ մը տալ այս չարիքներուն, կրնար կտրուկ հեռագիր մը տալ «եկեղեցիները բացէք» կամ «գոցեցէք» հրամայելով, քանի որ Ս. Հայրապետը իր յիշատակելի կոնդակով և ազգ. ժողովն ալ իր վերջին նիստին որոշումովը բացայայտ կերպով ճշդած էին պատրիարքին հետեւելիք ուղղութիւնը։ Մնաց որ, ս. պատրիարքը ինքը, ազգ. ժողովին մէջ, ամբողջ ուժովը կը պոռար, թէ Հայրապետին կոնդակը հրաման է իրեն համար և չի կրնար թոյլատրել, որ ոևէ երեսփոխան օրակարգ անցնել առաջարկէ զայն և վիճաբանութիւն կատարուի անոր վրայ։ Արդ, ինչ շուտ ժողոովեցաւ այս «ժէսթը»։ Արդեօք Հայրապետին կոնդակը հրաման ըլլալէ դադրեցաւ։

*

«Հանդէս Ամսօրեայի» յունիսի համարում Թաթուլ Վանանդացին «Հայ կեանքը» վերնագրով մի մեծ յօդուածի մէջ սրտի մեծ ցաւով խօսում է այն մեծ վտանգի մասին, որ սպառնում է հայ ժողովրդին.

Կատարեալ անտերնչութեան մատնուած է այսօր ազգը, խաղալիք՝ իւրաքանչիւր ինքնակոչ պետի մը երևակայական աշխարհակալ ցանկին տակ... Եւ, դժբաղդաբար, կը պակսի հեղինակաւոր ձայն մը, բուն բազուկ մը, հրաւիրելու և վարելու քաղաքական հօտը։

Որպէսզի ընդհանուր խօսքերու մէջտեղ մէջ անծայրածիր չէքանան մեր պրնդումները, մանրամասն յառաջ բերենք այն ամէն դէպքերն, որոնցմով իրաւունք կուտանք մենք մեզի, աւազելու մեր ողբալի կացութիւնը։

Ի՞նչ բերաւ մեզի սահմանադրութիւնը։ Տէրութեան տեսակէտով՝ ամենայն ինչ, մեր տեսակէտով՝ միայն խորհելու և խօսելու համեմատական ազատութիւն մը. բայց կը մնան միևնոյն վախն, անձկութիւնը, «դէպք» կոչուած հրեշագործութիւնն անսոյզ ուրուականը՝ դամոկլեան սրոյ մը պէս առկախ կեցած է մեր գլխուն վերևը։ Բայց այս կողմը պիտի չուզենք մեր ակնարկը, վասնզի քաղաքական տեսութեանց մէջ հետակորոյս կորսուիլ չենք ուզեր այս անգամ։ Ի՞նչ բերաւ մեզի սահմանադրութիւնը, մեր ներքին կեանքին ամրապնդման, ազգային հոգւոյ ուժին նկատմամբ։ Ցոռոտես ըլլալու վախը չունինք, եթէ այս հարցման ալ դիմացը մեծ ոչինչ մը դընենք իբր պատասխան. այո, «ոչինչ» մը, որ համեմատելով սահմանադրութենէն յառաջ ունեցած մեր ոչինչի հետ՝ աւելի ցաւալի և խոր խոցեր կը բանայ մեր սրտերու մէջ։

Սահմանադրութենէ յառաջ ազգին ողորմ վիճակին մէջ գոնէ տակը յոյս մը կը տածուէր, թէ ապագան պէտք է որ քիչ շատ բարւոքում յառաջ բերէ, քանի որ այնչափ հերոսներ այլևայլ ճամբաներով, զանազան միջոցներով, բայց ըստ երևոյթին միևնոյն նպատակին կը ձգտէին, և այս նպատակը համակրելից հոսանք մը յառաջ կը բերէր՝ սրտերու ալքերու մէջ։ Դիւրաւ կանտեսուէին աջէն ձախէն լսուած աղիտաբեր եղբայրասպան արարքներն, որովհետև ամենքն այն համոզումն փայփայուած տեսնել կուզէին, թէ «Հնչակ» ու «Դրօշակ» անուններն՝ մեր ապագայ վիճակին բարւոքման համար աշխատող մեծ բանակի մը աջ ու ձախ թեւերն են...։

Իսկ այսօր։ Երկու անունները կը մընան մեր յիշատակներու մէջ իրենց պատուաւոր դիրքերու մէջ։ բայց ի գործնականին ոչ ոք այլևս վստահութիւն ունի այս ժամանակներու վրայ, որովհետև, մանաւանդ վերջին թեւին վրայ գործող գունդերն՝ ազգին մէջ պատակու

թէ ազգի գոյութիւնը։ Ինձ համար անհասկանալի է, թէ ինչպէս լուրջ մտածող մի մարդ կարող է այդ միանգամայն պարզ բանը չը հասկանալ և այն տարօրինակ միտքն յայտնել, թէ «Երուանդեան ըէֆօրմները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի վաստակաւոր հողմ, որոնք, աչքի առաջ ունենալով հայերիս այժմեան քաղաքական-հասարակական դրութիւնը, միանգամայն վնաս են» (Յովս. Տէր-Վարդանեան, «Մշակ» № 107)։ Ի՞նչ քաղաքական-հասարակական դրութեան մասին է խօսքը, և ե՞րբ է այդ դրութիւնը փոխվելու։ Իսկ եթէ այդ դրութիւնը դեռ շատ երկար, գուցէ միշտ է տևելու, ինչ կը հրամայէ Տէր-Վարդանեանը. պէտք է եկեղեցական, կղերական և ազգայնական չը լինելով հայոց եկեղեցին պահել քարացած անշարժութեան մէջ, սառած կէտի վրա։

Աւելորդ եմ համարում այլ ևս երկարացնելը. այսքանն էլ ասացի նրա համար, որ ընթերցողը ինքը նկատէ, թէ որպիսի անբարեխիղճ զրպարտութիւն է իմ մասին ասածը թէ՝ Երուանդի ըէֆօրմն է՝ «Զնջել ամեն մի դաւանանք, եկեղեցի, էջմիածին, վարդապետ ու եպիսկոպոս»։

Այդպիսի ակներև զրպարտութիւնը միայն մի չար միտք կարող է ունենալ, այն է՝ վարկաբեկ անել մի բարի գործ անդիտակից հասարակութեան աչքում։

Նոյնպիսի զրպարտութիւն է այն խօսքը, երբ թէ ես եկեղեցական ժողով եմ պահանջում, որ դաւանական միջնադարեան փտած ֆօրմուլաները հասատաւեն և վիճաբանութիւն լինի դրանց, պասի ու խունկի ու ժամի մասին։ Որ ես այդ բոլոր բաներից շատ հեռու եմ, այդ գիտէ իւրաքանչիւր՝ իմ գրածները կարդացող. այնպէս որ ի զուր ժամավաճառութիւն է մի խօսք անգամ կորցնել այդ մասին։

Յայտնի է, որ 1902 թ. Յուսիկ արքեպիսկոպոս Մովսիսեանը ահագին աղմուկ բարձրացրեց, թէ Կարապետ եպիսկոպոսը համաձակվում է «յոյս յարութեան» ասել պատարագի համապատասխան հատուածի մէջ, և ոչ թէ, ինչպէս ընդունված է «յոյս յարութիւն»։ Այդպիսի յանդգնութիւնը նա համարում էր հաւասար եկեղեցին կործանելուն, բաժան-բաժան անելուն։ Դրա առիթով վիճաբանութիւն սկսվեց «Արարատ» և «Լուսաւոր» ամսագրերի էջերում։ Բանն այնտեղ հասաւ, որ Յուսիկ եպ. յայտնեց «Լուսաւորի» մէջ, թէ ճեմարանի քննութիւնների ժամանակ (ատրուճաբանութեան) մեծ դժգոհութեամբ լսել է չարունակ Շլայերմախերի և Հառնակի անունները, փոխանակ Յովհան Ոսկերերանի և Գրիգոր Աստուածաբանի (Դ. Նազիանզացու մարդիկ)։ Բանն այն է, որ Նազիանզացի եպիսկոպոսի արածը ոչ մի նորմուծութիւն էլ չէր, որովհետև շատ ձեռագրեր այդպէս են կարդում և մինչև այսօր էլ շատ թիւրքահայ եկեղեցականներ «յոյս յարութեան» են ասում։ Ես այդ վէճի ժամանակ գտնվում էի արտասահմանում և ոչ մի մասնակցութիւն չեմ ունեցել նրա մէջ։ Բայց ինձ համար—անկախ վիճաբանութեան առարկայից—կարևորութիւն ունէր այն խնդիրը, թէ ինչպէս մեր եկեղեցու բարձրագոյն հոգևորականութիւնը, յանձին Յուսիկ արքեպիսկոպոսի, Դ. դարի հասկացողութիւններն էր ուզում պաշտպանել, ոչինչ լսել չը կամենալով նորագոյն աստուածաբանական գիտութեան մասին։ Եւ երբ ես այս 1910 թուին Իրենիոսի գրքոյկը հրատարակեցի և մէջը նկատեցի «յոյս յարութեան» ընթերցուածքը, մի փոքրիկ յօդուածով «Հովիւ» թերթում այդ մասին յայտնեցի հետաքրքրվողներին, որ նախ՝ իմանան թէ Բ. դարում արդէն կար իրանց մերժած ընթերցուածքը, Ոսկերերանից ու Աստուածաբանից 200 տարի առաջ, և երկրորդ՝ որ 1902-ին Յուսիկ արքեպիսկոպոսի սկսած վէճը արդէնք էր մեայն յետաձգութեան և ազիտութեան։ Ա. Գիշմիշեանի խնդրով ապա՝ մի երկրորդ կարճ յօդուածով յայտնեցի, որ ձեռագրական համեմատութիւններն և այլն այդ խնդրի առիթով վաղուց կատարված են յատկապէս Գաթրճեանի և Տաշեանի ձեռքով, որոնց վրա հիմնվել և իր կողմից նայել էր Մայր Աթոռի ձեռագրերը Կարապետ եպիսկոպոսը։

Տեսէք, սակայն, թէ այդ պարզ իրողութիւնն ինչպէս է նկարագրում Լէօն. «Տեսաք ինչքան վիճեց նա, ձեր այդ արմատականը, ձեր այդ սերունդը՝ (ուղղված է Գիհիկեանին, որն իմ պատճառով նրա զայրոյթի առարկան է դարձել) պատարագի աղօթքներից մէկի մէջ գտնվող «յոյս յարութիւն» բառերի առիթով և ինչպէս յաղթեց, ապացուցանելով որ միայն տգէտները կարող են այդպէս կարդալ, իսկ գիտունները պիտի կարդան «յոյս յարութեան»։

Մի վերջին նկատողութիւն էլ։ Ես ոչ մի տեղ ասած չունեմ, թէ «ամենն բան ժողովրդին թողնել չէ կարելի, որովհետև ժողովուրդն էլ, որ մի օր «ոսանոնա» էր կանչում, միւս օրը՝ «ի խաչ»։ Այդ մասին առհասարակ խնդիր չէ եղել։ Լէօն իր նախկին յօդուածներից մէկում ասել էր, թէ Բագրատի գիւղացին աւելի իրաւունք ունի, քան թէ Երուանդը իր պահանջներով, որովհետև նա է բազմութիւնը։ Այդպիսի հայեացքը ընորոշելով իրրև անոտիապաշտութեան պաշտպանութիւն։ Ձօ ինակ էի բերել ցոյց տալու համար, թէ իրաւունքը միշտ բազմութեան կողմը չէ լինում։ Յիսուսի և Մահմէդի օրինակները։ Լէօն, իրրև թէ ինձ պատասխանելով, ասում է. «Ժողովուրդը չէը այդպէս բացագանչում (ոսանոնա և ի խաչ), այլ ժողովրդի վրա սիրող փարիսեցիներն ու մաքսաւորները»։ Ի՞նչ է ապացուցվում այս խօսքերով, եթէ ոչ իմ ասածը. իրաւունքը միշտ բազմութեան կողմը լինել չէ կարող, որովհետև բազմութեան վրա ազդեցութիւն ձեռք բերել և իրանց ուզածի պէս իշխել կարող են փարիսեցիներ ու մաքսաւորներ, որոնք ոչ մի դարում և ոչ մի երկրում պակաս չեն եղել։ Երուանդ Տէր-Մինասեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ղօչան, 12 յունիսի

Սահմանադրական կարգերը հաստատվելուց յետոյ՝ թէև այստեղ ևս տեղի ունեցան արտաքին մի քանի փոփոխութիւններ, բայց չիրականացան ժողովրդի վառ երազները ու օր աւուր չքանում են նրա յոյսերը։

Տեղի են ունենում այնպիսի կեղեքումներ ու քստմնելի դէպքեր, որոնք գուցէ չեն կատարված նախկին ըէժիմի օրով. տուժողն, ի հարկէ, դարձեալ խեղճ գիւղացիութիւնն է. նա պարտաւոր է ամեն բանի համար, որ բերվում է քաղաք վճառելու, հարկ տալ. հարկաւոր չէ իմանալ, թէ ինչ է բերը. բաւական է, որ բեռ լինի, և պիտի հարկ տալ։ Նոյնիսկ եղել են դէպքեր, որ տրված հարկը վճառելի գնի կէսից աւելին է եղել։ Ե։ ժողովուրդը տալիս է լուռ կերպով՝ զայրոյթը զսպած. իսկ միապետականները, օգտվելով ամեն մի չնչին առիթից, ատելութեան սերմեր են ցանում դէպի այդ նոր սահմանադրական կարգերը։

Տեղիս անջուանը կազմված է միայն սէիդներից և մօլլաներից, այսինքն այնպիսի անձերից, որոնք մի քանի ամիս առաջ բուռն հալածանք էին սկսել նոր կարգերի դէմ. իսկ այժմ, լինելով մէջլիսի անդամ, աւելի են նպաստում իրանց պրօպագանդային։

Քաղաքի կարգապահութեանը և հարկահաւաքութեանը հսկում է Նազմիէն (ոստիկանութիւն), որը շատ անգամ բռնութիւններ է գործ դնում խեղճ ժողովրդի վրա։ Ծեծը սովորական է. սկզբից մինչև այսօր ամեն մի չնչին մեղքի համար ծեծվում է ով և լինի։ Ամսիս 8-ին նազմիէն ծեծի ենթարկեց, չնչին մեղքի համար, 2 պատուաւոր էֆէնդիների։

Հետևեալ օրը նոյն սէիդները, ծեծից կապտած իրանց մէջքները բաց արած, շրջում էին բազարում, գրգռում ամբոխին՝ նազմիէի դէմ։ Ժամը 8-ին խանութները կողպվեցին, և բաւականին ժողովուրդ դրանց շուրջը հաւաքված, «կորչի նազմիէն» գոչելով, թափվեց անջուանի բակը և պահանջից հեռացնել նազմիէի ըէխսին ու ոչնչացնել թէ նազմիէն և թէ ադլիէն։ Այնտեղ խօսեցին մի քանի յայտնի սէիդներ, որոնցից մին, ի միջի այլոց, ասաց. «Մենք չենք ուզում այնպիսի ազատութիւն, որ գոյութիւն ունի միայն այնպիսի մարդկանց համար, որոնք պաշտօն ունեն նազմիէում. ով է տեսել, որ մարգարէի յաջորդին ծեծեն այսպէս անխիղճ կերպով. կորչի՛ նազմիէն»։

Ամբոխի կատաղութիւնը գնալով բորբոքվում էր ու հետզհետէ բակը լցվում, իսկ անջուանի անդամները լուռ հանդիսատես էին. նրանք միայն յայտնեցին, որ չեն կարող նրանց կամքը կատարել։ Այնուհետև ամբոխը, կատաղած, «եա Ալի» գոչելով, շարժվեց դէպի նազմիէի շինութիւնը՝ ոչնչացնելու նպատակով։ Նազմիէի զռնեռի մօտ տեղի ունեցաւ հրացանաձգութիւն նազմիէի կողմից, բարեբաղդաբար առանց մարդկային զոհերի։ Անշէն ամբոխը փախուստի դիմեց, որի ժամանակ շատերը ոտնակոխ եղան։ Անջուանը իսկոյն դիմեց նազմիէի ըէխսին, որ վերջ տայ այդ բռնութիւններին, կամ հեռանայ այստեղից։ Վերջինս դիմել է Մեշէդ։ Սպասվում է կարգադրութեան։

Տեղումս բացված է գիշերօթիկ ուսումնարան, որի ղեկավարութիւնը յանձնված է նազմիէին։ Ուսումնարանի բացման առիթով հայերին հրաւիրվեց ներկայ գտնվել։ Հայերը ներկայացրին մի խրախուսական գրաւոր ճառ, պարսկերէն։ Այդ ճառը կարդացվեց երկար ծափահարութիւններով։ Բացվեց հանդանակութիւն, և հայերի շրջանում գոյացաւ մօտաւորապէս 120 ք.։

Այնտեղ սովորում են հասակաւորներ՝ պարսկերէն և հայերէն։ Մի քանի օր առաջ մի պատուաւոր հայ գիմեց նոյն վարչութեան ու խնդրեց, որ իրան ևս թոյլ տան այնտեղ սովորելու, բայց նրա խնդիրը մերժվեց. մերժման պատճառը բանաձևված է շատ պարզ. «Հայերին չէ կարելի»։

Ա. Աբգարեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՖՐԱՆՍԻԱ

Ազգաբնակութեան պակասելը Ֆրանսիայում բաւականաչափ մտահոգութիւն է պատճառում ֆրանսիական կառավարութեանը։

Այդ չարիքի դէմ կռուելու իբրև միջոց սենատոր Լանգլէօնգը առաջարկում է 29 տարեկանից բարձր ամուրի տղամարդկանց համար մտցնել զինուորական յատուկ ծառայութիւն, պարտաւորեցնել պետական բոլոր պաշտօնեաներին, քաղաքային և հասարակական ծառայութեան մէջ գտնվող անձանց ամուսնանալ, առանձին արտօնութիւններ վերապահել այն ընտանիքներին, որոնք օժտված են երեք կամ աւելի զաւակներով, և վերջապէս ոչնչացնել այն օրէնքը, որը հարկադրում է հօրը բաժանել իր կարողութիւնը անպատճառ բոլոր զաւակների մէջ։

Կարելի է երևակայել՝ թէ ինչպիսի ցնծութիւն պէտք է առաջ բերի կանանց մէջ, եթէ ընդունվելու լինի այդ օրէնքը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 յունիսի

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ. Նովոմոսկովսկի գաւառում կարկուտից վնասվել են 1250 դեսեատին ցանքսեր։

ՁԵՄԲԱՐ. Մաչա գիւղում երեք հրդեհումներով ոչնչացված են մօտ 150 տներ։

ՄՕԳԻԼԷՎ. Բրխովի գաւառի Կայմասովիս գիւղում հրդեհի ճարակ են եղել 87 տներ, քահանայի տունը, դպրոցական շէնքը և հրդեհաշիջական օրօզը։ Կրակը լափեց քարաշէն տաճարը։ Զոհ գնաց մի մանուկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սինոդի օբէր-պրօկուրօրի ներկայացրած զեկուցումի վրա՝ Նորին Մեծութեան խոստովանահօր մահվան առիթով Կայսրը մակագրել է. «Թագուհի Կայսրուհիներ եւ ես խորապես ափսոսում եմ Մեր յարգելի խոստովանահօր՝ Իօանն Լէօնտիեվիչ Եանիշեւի մահվան մասին»։

Սինոդի անդամ Նիկանդր եպիսկոպոսի մահվան առիթով օրեր պրօկուրօրի տուած զեկուցումի վրա Կայսրը մակագրել է. «Եաs ափսոսում եմ»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲՈԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր. գիշերվայ, Հաջի-Կարալ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի՝ 8 ժ. 1 ր. առաւօտ., Բաքու՝ 8 ժ. 48 ր. առաւ.։ Ուրադ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ., Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցերբ., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցերբ., Հաջի-Կարալ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բաքու՝ 10 ժ. 53 ր. գիշ.։ Պօսատատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կարալ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 13 ր. ցերբ., Բաքու՝ 4 ժ. 45 ր. ցերբ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօսատատար № 74/75 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցերբ., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ., Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.։ Ալեքսանդրապոլ-մարդատար՝ 4 ժ. 15 ր. ցերբ., Ալէքսանդրապոլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երեւան՝ 10 ժ. 9 ր. առ.։ և սրանից դէպը այլևս չէ գնում։

ԲՈԳՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.։ Պօսատատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցերբ., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.։ Ուրադ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան։

ԲՕՐԾՕՄ՝ մարդատար № 7/8 8 ժ. 28 ր. առ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցերբ., Բօրժօմ՝ 2 ժ. 3 ր. ցերբ.։ Մարդատար № 9/10 3 ժ. 36 ր. ցերբ., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲՈԳՈՒՄԻՑ՝ պօսատատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցերբ.։ Ուրադ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ (այս գնացքը Բաթում չէ գնում)։

ԲԹԹՈՒՄԻՑ՝ ուրադ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.։ Պօսատատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.։ Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բաքու չէ գնում)։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօսատատար № 72/73՝ 6 ժ. 8 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյան։

ԲՕՐԾՕՄԻՑ՝ մարդատար № 9/10 8 ժ. 8 ր. երեկ.։ Մարդատար № 7/8 6 ժ. 28 ր. առաւ.

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԻԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 564. 100—16

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ գրախանութում վաճառվում է
ԱՆԱԹԵՄԱ
ԼԷՕՆԻԴ ԱՆԴՐԷԵՎԻ
Թարգմ. Ա. Յ.
Գինն է 80 կոպ., պօստի ծախսով 1 ռուբլի։
Կարելի է և պօստի մարկաներով։

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
վաճառվում են
1) «Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը», Երուանդ վ. Տէր-Մինասեանցի գինը 25 կ.
2) «Մի հնչիւնին մի գիր» (վերագրութիւն), Ստ. Մալխասեանցի գինը 20 կ.
3) «Ընկերվարութիւն և հայ ընկերվարականներ», Մուշեղ եպ.-ի, գինը 30 կ.
Օտար քաղաքներից դիմողները իւրաքանչիւր գրքին 7 կ. աւելի են վճարում, որպէս ճանապարհածախս։ Գրքերի գինը կարելի է վճարել և պօստային մարկաներով։
(օ. մ.) 704. 10—9

Մեծ-Ղարաքիլիսայի
ծխական դպրոցների համար
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ
արդէն հրաւիրված է։
771. 1—1

Եղեսիայի եկեղեցական-ծխական օրիորդաց միդասեան և տղայոց երկդասեան դպրոցների համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ և ԵՐԵՔ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Ուսուցչին կը տրվի տարեկան 400 ռուբլի զուտ ռոճիկ. իսկ ուսուցչուհիներին 300-ական ռուբլի, բացի ռոճիկից վերջիններիս բոլորին կը տրվի մի սենեակ։ Սահմանվող ուսուցիչ-ուսուցչուհիները կունենան շաբաթական 25—26 դաս և հերթապահ վերակացութեան պաշտօն։ Ցանկացողները թող անյապաղ դիմեն հետևեալ հասցէով՝ Черезъ Канову, въ м. Эдиссію, Попечительству Армянскихъ училищъ.
(օ. մ.) 757. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
յայտարարում է, որ յուլիսի 3-ին 1910 թ. նշանակված է մրցումն՝ կապալով տալու հետևեալ աշխատանքները. Նաթլուղ կայարանի հետևում՝ Նոր Սպանդանոցի հողամասում կառուցվող շինութիւնների—այն է՝ խոշոր ու մանր կենդանիներ և խոզեր մորթելու, խոզեր վաճառելու, սուսպարանի և մեքենաների համար պահանջվող շինութիւնների՝ հանդերձ բաղնիքով և լուացարանով—հիմքերը, պատուանդանները և պատերը շինելու գործը։ Նրանք, որոնք ցանկանում են մասնակցել մրցութեանը, պէտք է ներկայացնեն փակ ծրարներով յայտարարութիւններ՝ շինութեան Գրասենեակի կամ Շինարարական Բաժանմունքի կողմից տրված բլանկների վրա, հետևեալ մակագրութեամբ. „Къ конкуренціи за 3-е іюля 1910 года по постройкѣ Новой Бойни“. Ծրարները պէտք է ներկայացված լինեն յուլիսի 3 ին, ցերեկվայ ժամը 12 ից ոչ ուշ։ Յայտարարութեանը պէտք է կցված լինի Քաղաքային Ուպրավայի կողմից տրված անդորրագիր՝ 5000 ռուբլի գրաւական ներկայացրած լինելու մասին։ Առանց 5000 ռ. գրաւականի՝ տրված յայտարարութիւնները կը մնան առանց ուշադրութեան։ Աշխատանքների մօտաւոր քանակութիւնը որոշվում է. քարաշէն հիմքերը 275,00 բառ. սաժ., ուղիւսաշէն պատերը 620,00 քառ. սաժ., պատուանդանի սուղտումը՝ ճաճանչաւոր տաշուածքով—260,00 խոր. սաժ.։ Պայմանները և մակարդակը կարելի է տեսնել լի օրերը՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը, շինութեան գրասենեակում, Նաթլուղ կայարանի հետևում։
(ա. օ.) 774. 2—1

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Կենդանիների զոյները», Ն. Սարգսեանի	15 կ.
«Հայաստանը երբեմն և այժմ», Ի. Յարութիւնեանի	20 կ.
«Պատմութիւն Եղիշէի», էժանագին հրատար.	20 կ.
«Ղազար Փարպեցի» » »	30 կ.
«Կիրակոս Գանձակեցի» » »	30 կ.
«Ժողովրդական խաղեր», Մ. Աբեղեանի	50 կ.
«Մեղուաբուծութիւն», 108 պատկերով, Վարդոմեանի	75 կ.
«Բանահիւսութիւն», Ճաղարբէգեանի	60 կ.
«Բանահիւսութիւն», Հ. Առաքելեանի	50 կ.
«Հասան փաշայի հէքիաթը», Խայեաթի	25 կ.
«Շերիմի և Ֆարհադի հէքիաթը», երգերով, Մխիթարեանի	30 կ.
«Լէյլու և Մաճնունու հէքիաթը», » »	30 կ.
«Ընտանիք», № I և II, Ս. Թառայեանի	30 կ.
«Ընկեր», № 1, հետաքրքրական, խմբ. Թառայեանի	10 կ.
«Անաթեմա», Լ. Անդրէեվի, թարգմ. Ա. Յ.	1 ր. —
«Նոր Առաւօտ», Յ. Յակոբեանի	15 կ.
«Թմբկաբերդի առուժը», Յ. Թումանեանի	15 կ.
«Գեղարուեստ», № № I, II և III, պօստի ծախսով	6 ր. —
«Քաղաքակրթութեան պատմութիւնը», Սենեբօսի	1 ր. —
«Ազատութեան ճանապարհին», Ա. Ահարոնեանի	80 կ.
«Մուրացանի երկասիրութիւնները», Ա. և Բ. հատոր	3 ր. —
«Ժողովրդական դպրոցների մեթոդիկա», Յ. Տ.-Մ.	1 ր. 50 կ.
«Հայոց ուսումնարանների ծրագիրը», խմբ. Ս. Տիգրանեանի	40 կ.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. И. Галустяну.
(շ. ե.) 775. 2—1

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան
յայտարարում է, որ յուլիսի 5-ին, երկուշաբթի, ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է մրցումն Միխայլովսկի պրօսպէկտը ասֆալտով յատակելու համար, սկսած Նէմէցկայա փողոցից մինչև Կիրօչնայա փողոցը՝ 968 քառ. սաժ. տարածութեամբ։ Աշխատանքները կատարելու և վճարումների ժամանակն պայմանները կարելի է տեսնել Շինարարական Բաժանմունքի գրասենեակում ամեն օր։
(ա. օ.) 779. 2—1

Յուլիսի 1-ին, հինգշաբթի
ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
մէջ տեղի կունենայ ԵՐԿՐՈՐԴ և ՎԵՐՋԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐ ութ կալուածքների վերաբերմամբ, որոնք յունիսի 24-ին տեղի ունեցած աճուրդում մնացել են անվաճառ։
Նոյն օրը, նոյնպէս և հետևեալ օրը՝ ուրբաթ, տեղի կունենայ աճուրդ ԱՁԱՏ ԳՆԵՐՈՎ բոլոր այն կալուածքների վերաբերմամբ, որոնք մնացել են Ընկերութեան վրա նախկին աճուրդների ժամանակ։
Բոլոր վաճառվելիք կալուածքների ցուցակը կախված է Ընկերութեան շինութեան մէջ։ Վաճառքի պայմանների մասին տեղեկանալ Ընկերութեան գրասենեակում։
(ա. օ.) 778. 3—1

ՀԻՊՆՕՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնօսիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
Հիպնոտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնոտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլութիւններն ու վատ բարքերը։
Հիպնոսական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնոտացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և ապա դիմեցէք դարմանելու հիւանդութիւններ, ուսէք ապաքինիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրոֆէսիոնալ հիպնոտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնոտացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն Հիպնոտիզմի, Միստերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգեմտաւորութեան և Ցեւկոպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պէտք ուղարկել 10 կոպէկի նամակադրոշմ ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 2030 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(ե.շ.) 689. 100—7

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՃՐԵՐ
Առ. և Ա. Մ.
„ՆԱՐՋԱՆ“ | Սեղանատան | „ԷՍՍԵՆՏՈՒԿԻ №20“
Բուժիչ
ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19։ ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՈՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։ ՀԵՂՈՒԿ ԱԾԽԱԹՈՒ, միանգամայն մաքուր, ստացված Կիսլովոդսկի «Նարզանից»։
Պահանջեցէք անմնացորդ։
ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, № 10.
Ածխաթթի պատուէրների և մանրամասն նկատողութիւնների ու պրէյս-կուրանտների համար դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.
(26 ...) (М. 196502) 763. 2—1

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.